

մանիոյ մէջ: Ազգ. երեսփոխան Եգիպտոսի եւ 1911ին ալ կաթողիկոսական ընտրութեան պատուիրակ, 1913—14ին տեսուչ Կեսարիոյ Ս. Կարապետի վանքի վարժ.ին. հրաժարելով այս պաշտօնէն՝ իբրև մնայուն ներկայացուցիչ Երուսաղէմ կուգայ՝ Լիազօր պատուիրակ Մաղաքիա արքեպս. Օրմանեանի հետ Ս. Յակոբի վանքին մէջ իր պաշտօնին ձեռնարկելու համար, բայց պատուիրակին հետ ունեցած անհամաձայնութեան պատճառաւ՝ կը մեկնի Եգիպտոս ուրկէ կարևորը կը տեղեկացնէ Ընդհ. ժողովին, հրահանգի սպասելով:

Թէքէեան 1917 ին Հայկական Լեգէոնի գործերով կ'զբաղի Բարիզ ազգ. պատուիրակութեան մօտ, որուն կողմէն կը զրկուի Երուսաղէմ, անզգ. գրաւման առթիւ ստացուած նոր կացութեան մասին խորհրդակցելու համար Միաբանութեան հետ: Երուսաղէմէ դարձին Եգիպտոսի ազգ. միութեան կողմէ Բարիզ կը զրկուի մասնակցելու համար Համազումարի ժողովին եւ անդամ կը նշանակուի անկէ ընտրուած ազգ. Պատուիրակութեան, 1919 ին Երևան կ'երթայ նոյն տարուան մայիս 28ի ափսին առթիւ: 1920 ին Պոլիս կը դառնայ և մինչև 1923 կը մնայ հոն և Քէմալական գրաւումէն քանի մը օր առաջ կը մեկնի Պուլկարիա եւ յետոյ Յունաստան, ուր ազգ. պատուիրակութեան յանձնարարութեամբ կ'այցելէ քանի մը գաղթականներ եւ որբանոցներ, 1923 ին կը մեկնի Բարիզ, յետոյ կը հաստատուի Եգիպտոս 1924ին:

Թէքէեան խմբագրած է Ազգս քեւ, Շիրակ և Լուսաբեր թերթերը. 1926էն սկսեալ կը վարէ Արևի խմբագրութիւնը. հրատարակած է երեք հատոր քերթուածներ՝ Հոգեւ, Հրաշաղի Յարութիւն և Կես գիշերին միևյեւ Արշաղոյս:

ՎԱՀԱՆ ՎՐԴ. ԳԷՈՐԳԵԱՆ, ՀԱՃԻ ՀԱՊԻՊԼԻՑԻ (Անխոյն). — Մբ. Ծ. 1882ին. Զո. 1919ին. ՏԴ. 1922ին. ՏՅՊ. 1925ին. ՏԼ. 1927—1929. ՏԲ. 1929ին, անդամ Տն. ժողովի 1929ին:

ՎԱՀԱՆ ՎՐԴ. ՅԱԿՈԲԵԱՆ, ԹԷՔԻՐՏԱՂՑԻ. — Մբ. Ծ. 1849ին. Զո. 1877ին. Ս. Աթոռոյ կալուածոց քննիչ Հալէպի մէջ 1881ին. յետոյ հրաժարելով Միաբանութենէն կը մեկնի Պոլիս. վարած է ուսուցչական, առաջնորդական և քարոզչական պաշտօններ Պոլիս եւ գաւառները, վախճանած է Պոլիս 1920 ին: